

ՀԱՏՈՐ ԽԷ-

1889


ՅՈՒՆԻՍ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՑՆ

ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ՆՇԱՆԱԳՐՈՑ ՎԵՐԱՑ

(Տես էջ 129)



ԵՏ ցուցանելոյ մեսրոփեան յարմարագրութեան տառի. ճանաւոր խանդարմունքն յընթացս գարուց և յեղափոխութեանց, քննենք այսուհետև այնպիսի եղելութեանց բուն պատճառքն: Առ այս դեռ յուղի չանկած, այս քնական հարցս մեզ ընդ առաջ կ'ելլէ. Արդեօք հնչման կամ կենդանի արտասանութեանց աղաւաղութիւնն եղած է սկզբնապատճառ նախնեաց հինաւուրց յարմարագրութեան ազաւաղման, թէ ընդհակառակն, յարմարագրութեան աղաւաղութիւնն համարելի է սկզբնախթ մեսրոփեան տառից արտասանութեան աղաւաղութեանը: Ըստ բողոքարկութեան Ռուսահայ լրագրաց՝ իբր թէ առաջինն եղած լինի սկզբնապատճառ վերջոյն: Սակայն այս ենթագրութիւնս ըստ ամենայնիչկարէ լինել ճշմարիտ. որովհետև, յառաջեան զիստե գարուեալ մեսրոփեան յարմարագրութեան, մանաւանդ թէ լրաւալ քան զհաստատութիւն յարմարագրութեան, և ամէն ժամանակ և ամէն ազգաց մէջ եղած են և կան իրարմէ տարբեր գաւառական արտասանութիւնք, բայց ոչ նոյնպէս տարբեր ուղղագրութիւնք կամ լաւ ևս յարմարագրութիւնք՝ ի գարութեան անդ. այլ իւրաքանչիւր ազգի գրութեանց եղանակը միակերպ է՝ ի բաղմամայնութեան անդ գաւառական հնչմանց. օրինակ իմն վենետացին հա էք հնչէ ga. իսկ Տոսկանացին՝ cartan՝

harta, բայց երկաքանչիւր գաւառի մատենագիրք մի և նոյն կերպով կը գրեն, այսպէս և գերմ. ich մէկ գաւառացին իշ կը հնչէ, իսկ միւսը՝ ին կամ փափուկ խ. այսպէս կը տարբերին յիւրեաց Պրովանսալցին և Պարիզեցին, Իռլանդացին և Անգլիացին, բայց 'ի գրութեան կը համաձայնին իրեաց մատենագիրք իւրաքանչիւր ազգացս: Այս բանս այնքան յայտնի է և ակներև, որ և ոչ իսկ ապացուցութեան կը կարոտի, զի նոյնասեր ժողովրդոց մոտաւորական և ֆիզիկական կազմութենէն կը կախուի: Իսկ երկազողմեան կազմակերպութեանց և իրարմէ ունեցած զանազանութեան բնական պատճառքն՝ են լերինք և կլիմայք. վասն զի քիւրիքս 'ի փորձոյ հաստատեալ իրողութիւն մի է այս, թէ մի և նոյն լեւանց, օրինակ իմն Աւստրիանց երկու կողմերէ տաւազող ժողովուրդք՝ ոչ միայն բարուք և տարազուք, այլ նոյն իսկ ար. տասնութեամբ կամ ձայնիւ կը զանազանին 'ի միմեանց: Արգ այս կրկին և անհրաժեշտ օրինացս ենթարկուած էին և պետք էին լինել նոյնպէս և Հայոց ԺԵ նահանգ. ներում, մանաւանդ թէ լեւերով և կլիմաներով իրարմէ անջատեալ գաւառացիք: Սակայն ինչպէս Տոսկանա էր սիրտ և կեդրոն իտալական ցանուած և ցրուած գաւառաց՝ ուր զարգացաւ և տիրեց միակերպ դպրութիւնն, Պարիզը՝ Գաղղիացուց և Լանդրա՝ մեծին Բրիտանիոյ, այսպէս ևս Այրարամն՝ Հայոց մեծաց Գպրութեան, որուն համաձայնեցան և հարկ էր որ համաձայնէին մատենագիրք բոլոր միւս գաւառաց, և համաձայնէին այն կէտով և պարագայից մէջ, զորս նախընթաց յորոշածին մէջ նշանակեցին: Ուստի ինձ կ'երևի, թէ Հայոց այժմեան այդ գաւառաբարբառներու և նոցա արտասանութեանց ուսումնասիրութիւնը՝ թէպէտ և յոյժ կարևոր, բայց ուղղակի վերաբերութիւն չունի նախնեաց յարմարագրութեան հետ, հետևաբար և ոչ իսկ բանաւոր և բաւական պատճառ 'ի հաստատել կամ 'ի մերժել զայն. ուստի որոնք որ այս տեսակէտով կը պնդեն և կը պաշտպանեն Տաճկահայոց գրականութեան մէջ գործածուած հակամետրոլիքեան առաջադարձութիւնը՝ կամայականութենէ զատ ուրիշ հաստատուն հիմն չեն կարող ունենալ. որովհետև յարմարագրութեան ինչպէս ծագումն, այսպէս ևս տեւականութիւնը՝ յոյն, լատին և հայ տառից կամ դպրութեան վրայ հիմնեալ է. ուստի ինչ որ այդ հնդեւրոպական ընտանիքին կը վերաբերի և նորա տառից հարազատ չհնդդութեան համաձայն է, նոյնն՝ ուղիւ յարմարագրուած է. իսկ ինչ որ այն ընտանիքին չի վերաբերի և նոցա տառերու բնական հնչման չի համաձայնի, նոյնն է և պէտք է որ համարուի իբրև խոտորումն և աղաւաղութիւն հինաւորաց յարմարագրութեան: Չայս կարելի է ըսել նաև սեմանիք ընտանիքի գրականութեան մասին, եթէ անոնցմէ ևս ստուգիւ տառեր փոխ առած ենք, և կամ եթէ համազօր տառեր և տառից յարմարագրութիւնք երբեք տեղի ունեցած են և պիտի ունենան: Արդ, գէթ առաջին տեսակէտով, Տաճկահայոց գրականութիւնը մեծապէս խոտորած է հնդեւրոպական գրականութեան այս ընդհանուր օրէնքէն, ըստ մարմնաբերոյ լսիեաց փոխելով և վեր 'ի վայր ընելով նոցա տառերու հինաւորաց և հարազատ ձայները: Բայց թէ ինչ պատճառներով և պարագայիք, ահա այս իսկ է ջննութեան զլխաւոր խնդիրն և նախընթաց խնդրոյն լուծումը:

Ըստ իս, նախնեաց թէ յարմարագրութեան և թէ մետրոլիքեան տառերու հարազատ արտասանութեան փոփոխութեան պատճառքն և պարագայք՝ որոնելու ենք այն բնական իրաց և համանման պարագայից մէջ, որոնք են իբրև անհրաժեշտ օրէնք, և բազմահոլով անիւք յեղափոխութեան ազգաց և ժողովրդոց՝ 'ի յառաջ կոչս և կամ 'ի նահանջ աղիտաբեր պարագայք, որք ինչպէս 'ի սկզբան անդ կազմութեան լեզուաց և դպրութեանց կարացին յառաջ բերել և զհայ լեզուն և զգպրութիւնն,

այսպէս ևս յետո ընկերելով միայն կարելին աղաւաղել կամ փոխել ի սպառ զայնոսիկ: Եւ յիրաւի, այսպիսի իրաց և պարագայից կարգէն են, Ա. Օտարաբուն և օտարահնչուն աղգաց մուտքն ի Հայս և հայ տարերաց վրայ գործած դարաւոր և զօրաւոր աղգեցութիւնն: Բ. Հայ ժողովրդեան այս պատհաւ ունեցած մոտաւորական յետամնացութիւնն և գրականութեան գրեթէ բոլորական մոտացութիւնը: Գ. Հայ աղգարնականութեան մշակուած և բարեկեցիկ դասին նիւթական տեղափոխութիւնն և օտարաբարբառ աշխարհաց և ժողովրդոց մէջ ընկզմին, և անմշակ մնացած դասուն ալ ստրկական և միշտ հարստահարեալ վիճակի մէջ նուաճուած լինելն: Դ. Մէկ կողմէն լատին — գերմանական և սլաւո — լիթուանական լեզուաց նորանոր կազմակերպութիւնն և հին դարութեան մէջ բերած ձայնական յեղափոխութիւններն: Իսկ միւս կողմէն այլ հայ գաղթականութեանց զայնս ուսանելու և արտասանելու անհրաժեշտ հարկը: Ապացուցանենք այս պատմական կէտերս:

Արդ հայ լեզուն, լինելով գուսար Սանսկրիտ մայր լեզուն՝ և համածին և համասնընդհանր Ջանդերէնի, բաց ի բազմապատիկ բարեմասնութեանց՝ ունէր փոքր ի շատէ նաև նոցա ձայներն և արտասանութիւնն, ինչպէս յառաջին յօդուածին մէջ բերուած բառից և բանից ուղղագրութեանն իսկ յայտնուպէս տեսանք: Յունարէնն և պարթևարէն և դեռ ուրիշ նոյնաբուն լեզուներ ևս լեզպէտև յետոյ եկան և աղգախառնեցան ընդ հայումս, բայց նորա լեզուական գանձերն հարստացնելու և արտասանութիւնը կանոնաւոր կերպով հաստատելու և ոչ լեզ փոխելու և այլլայլելու համար. որովհետև մի և նոյն ընտանիքը իր կազմէին լեզուական դասակարգին մէջ և դեռ չկար երկիւղ օտարասեռ քանից և ձայնից: Եւ յիրաւի, ուշի ուշով ընկելով իր տեսնենք ակներև, որ ոչ միայն հայ լեզուն և գրականութիւնն, այլ նոյն իսկ Հայաստանի պատմական և աշխարհագրական անուանք մինչև ցի դար զուտ հայապարթևական են ընդհանրապէս կամ հնդարիական: Իսկ յի գարէն և այսր՝ երբ հարաւայնից կամ սեմական օտարաբուն ցեղի արշաւասոյր և բուռն ընթացքն ուղղեցաւ և թափեցաւ ի Հայս, և Պարսաւ և Իռան եղան մի մի ոտան և վառարան արարացի ոտտիկանութեանց, այն ժամանակ հրոյ և արոյ ձարակ եղան գաղաքք և գաւառք առհասարակ: Սակայն սոքա դեռ այն բազմակողման աղէտաց և աւերածոց մի մասն են, որոց վրայ պատմաբանին անկ է լալ և ողբալ. իսկ մենք նկատելու ենք նոցա կարծեցեալ շինութեան և Հայաստան աշխարհի և աղտի վրայ բերած լեզուական յեղափոխութիւնը: Երբուն ուշ կամ շուտ զոհ պիտի լինէին հայապարթև լեզուն և արտասանութիւնը: Նախ փոխեցան անուանք գաւառաց, աւանաց և գիւղից և այլ աշխարհագրական տեղեաց: Երկրորդ, մէկ կողմէն երկարատև քնակակցութեամբ տիրապետող ժողովրդեան, միւս կողմէն այլ յաճախակի աղգախառնութեամբք մտան Հայոց մէջ նորակերտ նորածին անուանք, անձանց պատանոյ և պաշտաման, լատիւց և կլուց, հարկաց և բաշխից, դրամոց և վաճառուց, կահուց և կարասեաց, բուսոց և տնկոց, գեղոց և դարմանոց, և այլն: Այնպէս որ յետ երկուց կամ երեք դարոց՝ Հայոց անգրաբէտ գասող ընտանեկան խօսակցութեան մեծագոյն մասն արաբական բառեր էին, ինչպէս այսօր են թրքերէն բառերն՝ Հայկպի և Կ. Պոլսոյ ռաւիկ ժողովրդեան խօսակցութեան մէջ: Ղևնդ Սրբոց, Ստեփանոս Օրպէլեանի և Թովմայ Սրբորունոյ պատմութեան էջերում, ինչպէս նաև արձանագրութեանց մէջ խիտ անոր են զուտ հայկական անուանք անձանց, այլ խառնուրդ իմն արաբական: Ինքզ՝ հայ ժողովրդիցն այս օտար աղգեցութեան ներքեւ հետ զհետև կորսնցընելով իւր բնիկ լեզուն և գրականութիւնն, իսկ միւս կողմէն այլ ստիպուած լինելով

Անկայն առիվա եր վայն առաջին. իսկ երկրորդն այն օրէն սկսաւ և գարուց 'ի գարա բազմացաւ, երբ Ալէճուկեան և Մոնղոլ Թրքաց կամ Թաթարաց արշաւանքն ընդ' աղմուշաղախ հեղեղներու նման ողողեցին զՀայաստան: Արդ հայ ժողովրդեան թէ՛ այն մասը որ հաստարմատ կազնեաց նման մնաց իւր բնիկ հողին վրայ՝ կոծելով ընդգռէ՛ հիւսիսային մրկաց և հարսուային խորշակաց, և թէ՛ այն մասը, որ մոտադաւառուն թուռոց նման փոխադրեանս 'ի Թաթարաստան և 'ի Փոքրն Ասիա, կտրանցեւ զով իւր կլիման, հողն և ջուրը, և 'ի վեր քան զամենայն հայկական ուսմանց և ընդու ի վաւարանները, անկարելի էր որ զօրաւոր կերպով չի կրէր այն ազգայ տիրող ազգեցութիւնը: Այն սակաւամթիւ ձեռագրերն, զորս նուիրական թերափնեբու պէս տարին իրենց հետ այն գունգագունդ գաղթականները, ընդան բաւական վառ և կենդանի պահել նոցա մէջ հայերէն լեզուն և գրականութիւնն՝ իւր նշխարեալ առանձնայառկութիւններով, ևւ յիշաւի, այն ընդարձակ ժամանակամիջոցին յորում Հայք մնացին ընդ լծով Թրքաց և Թաթարաց, գրեթէ ոչ ինչ գրականական արդիւնք տաւով բերէ, և յառաջ բերուածներն իսկ ուրիշ բան չեն ներկայացներ մեզ՝ բայց թէ՛ ողորմ մնացուածս ասմիկ լեզուին, Թաթարերէն, և Թրքերէն բառերով զանգեալ և կազմեալ իսկ մատաղանի սերունդն, որ 'ի ծնանէն ջըլպապառուած գտան զլիքեանս 'ի մէջ օտարաբուն և այլահնչուն տարերաց՝ ստիպեցան իրենք ևս յաճել հասակին, նոցա խօսիւք և ձայնով յօգել զբարբառ և ուսանել և գրել: Այսպէս ուրեմն է՝ գրաւն 'ի վեր մինչև ցայսօր, հայ ժողովրդեան թէ՛ այն մասը՝ որ յետոյ ուրեմն ուղեց որոնել իւր բաղքը Ռուսաց, Լեհաց և Ունգարացուց քրիստոնայաբաւան ազգաց մէջ, և թէ՛ այն մասը որք համակամեցան ընդ ստրկական լծով Թրքաց և Թաթարաց, 'ի Հայս և 'ի Փոքրն Ասիա, կրեցին առանց բացառութեան արաբ և մոնղոլաթուրք խիտող լեզուաց և արտասանութեան չօր ազգեցանութիւնը, թէ՛ և ոչ նովին չափով. զի Լեհաստանի և Իրանսիւլանդիոյ Հայք, ուր որ կարող ըզան կերտնանալ և կազմել ազգային փութիւններ, պահեցին անաղաբա հայերէն լե-

զուգին գէթ քերականական առժուռներն, բայց ոչ հին արտասանութիւնքը. իսկ այլք որ հաստատուեցան 'ի Փոքր Ասիա և 'ի Ա. Պոլիս, բոլորովին նոր աշխարհաբար մի կազմակերպեցին, օտար օմեններն 'ի կազմութենէն և 'ի կանոնաց դասական լեզուին:

Արգարէս, այսպիսի ճշմարտութեան մի համոզուելու համար՝ բաւական է ակնարկ մի տալ Հայաստանի նոր Աշխարհագրութեան վրայ, զոր ընծայէն մեզ Ինձինձեան և Ալեշան վարդապետները. և կը տեսնենք, որ թէ Մեծիկ և թէ Փոքր Հայոց երեսը բոլորովին կերպարանափոխ եղած է. և Մովսիս և Վարդանայ մեզ աւանդած և մտարդբան տառերով քանդակուած և հնչուած բոլոր հայեցի անուանքը՝ արաբական և թրքական գրերու և հնչմանց փոխուած են: Արգ այս աղիտաբեր և դանձադատագրէս, որուն ենթարկուեցան Հայաստանի անշուշտ արձաններն, զիարդ կարէին ազատ մնալ նորա շնչաւոր և կենսունակ արձաններն, որք դարուց 'ի դարս արտաստուածոր ալք գիտեցին առաջնոց աղէտքն և 'ի սիրտս մոլեցին, և որք ամենէն աւելի փոփոխութեան ենթակայ էին: Այո, այս բանս աւանց երկբայուն թեան է, զի այնպիսի ժամանակի և պարագայից մէջ ենթարկուեցաւ հայ ազգն և լեզուն և աշխարհն այս ճակատագրիս, յորում գպրութեան լուսատու փարոսն հաղւաւ ուրեմն կու տար իւր շինելափառ լոյսը կամ նա ինքն իսկ բոլորովին շիջած էր, թողլով զնոսա ագիտութեան աշխարհաւեր խոր խաւարի մէջ. իսկ հայկեան փառապանծ լեզուն՝ խառնախօսիկ խառնաձայն ռամբորէնի փոխակերպուած էր: Ուստի հարկ էր, որ ուշ կամ շուտ այն ռամբորէնի իսկ թրքերէնի և թաթարերէնի, քրդերէնի և այլն փոխուէր, իւր վերջին աւերմունքն և ողորմ վիճակը ներկայացնելու համար արգի գրագէտ դասուն: Տարօրինակ գէպք. ոչ ապաքէն Իսաբէհ և Արտաշէրք իսկ տիրեցին ընդ երկար Հայաստանի. օակայն երբ տեսնուեցաւ այսպիսի ինչ, Այո, զի տիրեցին զօրութեամբ, բայց ոչ ողորդեցին և ընկղմեցին զՀայոս պարսկի ազգաբնակուլթեամբք. օտարք էին 'ի Հայոց աշխարհաւ, բայց ոչ գլխովին օտարաշարժ լեզուաւ և հնչմամբ, նուաճեցան Հայք ընդ գերիշխանութեամբ մարա-պարսիկ և Ասորեստանեայց տերութեանց, բայց պահելով իրենց ազգային միութիւնը և լեզուն:

Երկրորդ և մի այլ շուտփելի ապացոյց մոնգոլաթուրք և քիւրդ լեզուաց աղբեցութեան, և հետեւեալ իրողութիւնը. կը տեսնենք ակներեւ, որ Տարսնի և Վասպուրականի կողմանց հայ բնակիչներն՝ որք թէպէտ Գրգաց լեզուն, տարազն և անուանքն իրենց սեփականած են, բայց ռուս և վրացի լեզուաց աղբեցութենէն զխովին ազատ են, ինչպէս Վրաստանի և Ռուսաստանի Հայք այլ յառաջնոց աղբեցութենէն զերծ մնացած են. սոյնը կը տեսնենք նաև Լեհաստանի և Դրանի վանիոյ Հայոց վրայ: Սակայն անկարելի է դանձել 'ի սփիւռս ողբաց գաղթած և իւր բնիկ հայրենիքում մնացուածս ինչ հայութեան, որուն գրաւոր և կենդանի լեզուին մէջ չտեսնուին մոնգոլաթուրք լեզուին աղբեցութիւնքը. մանաւանդ թէ, նա ինքն էր ինչպէս երեսուն տարի յառաջ՝ այսպէս և այսօր ռամբորէնի մէջ տիրող տարբը, զոր «Քննական Փերականութեան» մեծապատիւ Հեղինակն մեծ համոզութեամբ արդէն 'ի հանդէս տներ է: Ուստի եւ կը համառօտեմ աստ գէտ մի քանի ամիս առաջ Գ. Պոլսոյ ռամիկ ժողովրդէան կամ ընտանեաց մէջ տեղի ունեցած մի խառնկցութիւնը, զոր «Մա-

1. Երբեք, թէ սոցա մէջ ևս մեծապէս փոխուած են մետրիքեան տառերու կնիւնքը արտասանութիւնքը, լաւ կերպով ապացուցած է տաղանդաւոր խաղաղէան Դակտոր Յովհ. Հանուշ լեհաւոց զաւտաբարբառայն վրայ ըրած ուսումնասիրութեան վերջաբանին մէջ: Տես «Wiener Zeitschrift», 1889, I. Heft, S. 49-50.

դիկի» (Թիւ 170, Բ. Տարի, 8 Հոկտեմբեր 1888) խմբագիրը «Նյութապաշարմունք կանանց» վեճանագրով մէջ կը բերէր:

«Սանքիմքուրուկ, շահա շուխա էփէյի վախթ էղաւ սա կըյրթին հիւանդու: «Թիւնը: — Ամա, Սըաբեր տուտու, ինծի սա մերաք էղած է քի, ինչու տարը սոր «տանն է բարութալը հէքիմ մը չէք պերեր կ'որ: — Քա ինչ հէքիմ աղկըս, հէքիմ «պերենք բարայէն էլանք — Ասանկ է եա, հոգի, հեմ պէլքի Ասուածմէ եկած ցաւ «չէ — Եխսաբերթ տուտու, տուն ասանկ պաներ կիտես: քու կլոխէդ շատ պաներ «անցած է — Սամաթիա Պախըճի մը կայ, անոր կացէք տէյի քեօջէի Հոռմին կէն: «Ճը, քթօնա Տօմին Թարիֆ տուտու նէ էլանք կացինք: Համայիլ նուստա մը կրեդ «տուտու — Անիկա Թուանս անունին կրուած է, ասոր ֆայտայիկ մը ըլնծի: — Քա «կիտես, ասն արեղաւ չօճուխը աէ օկլը, ծառքը չէր տըղէկէր Զոր խանութայով «մը օխաղ հորեն ձուր պերէլ տուինք, կըլխուն վերէն տրինք» ևայլն...:

Յիրարի, ո՛վ չի տեսներ Թէ մոնգուլութուրք գրչիփը (կտրիչ) բառին աղէեցած Թեամարը՝ հայերէն տիւն տառն՝ յ ի փոխուած է և չան՝ ձ լինելով կըլրիճ: այլեւորէ (ակն յայտնի) բառին զօրութեամբ աչքը՝ աչկ եղած է. այսպէս փ — ք, օրինակ իմն, շաք (շափ) քնչաք: Եիտի (եօթն) հնչման աղգեցուցութեամբ հայերէն ք՝ տ փոխուած, օխտ, պ — փ, ինչպէս փանիր (պանիր), ք — Թ, Ժաքէլ (Ժագեւ), չա կամ հայաէ (այմ) յորում ա — հ, գ — ք, օրինակ իմն քի (քի), և ու կամ եւ — վէի, զոր 'ի վար արկանէ Սմբատ: Վար (ուշող) ձայնին զօրութեամբ՝ հայերէն ետոր և անոր, բար և եմ վերջաւորութիւնները՝ փոխուեցան 'ի վար, օրինակ իմն, հայեվար, Թըքեվար ևայլն, այսպէս նաև հ — ֆ, ճ — շ, օրինակի աղագաւ, օֆ (ոհ), հազ, և հազեղութիւն (հաճ, հաճելութիւն): Փ — ֆ, աֆիոն (ափիոն), Ժ — ճ, մամուլ (մամուլ), մաճաւ (մեծ երակ), տ — Թ, քախք (տախտ), դ — Թ, օրին. իմն քաժա կամ Թաճա (քաժա, գալար): Այլուր հ և ո տառերը ֆէի փոխուած են, ինչպէս ֆորք (հորք), ֆորս (որս), ֆոտ (հոս), ֆող (հող) ևայլն: Այսպէս են նաև դեռ ուրիշ հազարաւոր բառեր, զորս չկամիմ են կուտակել ասա 'ի ձանձրոյճ լուրեաց, որոնց մէջ գրեթէ ամբողջ մետրովեան տառից ձայները փոխուած են: Բ. Հայերէն մակրայից վրայ Թըքական առմունքներ յաւելնալուն պատճառաւ, նոցա նուազական կ տառը՝ մ փոխուած է օ օրինակ իմն, հիմաճուկ (հիմակուկ կամ այժմիկ), կարճըմուկ (կարճեկի) քիշիճիկ (քիշիկ), կտորիկ (կտորիկ) ևայլն: Գ. Իմիջի, ձերիջի, մերիջի Թուրք. ածանց ստացական դերանունաց մէջ՝ հայերէն ս դիմորոշ տառը՝ քի փոխուած է, շնորհիւ Թըքերէնի: Գ. Հայսրդ, քեզսիդ, չարլիս և այլ ստարամուտ վերջաւորութիւնք իսկ առանց իրենց նախընթաց տառերու հնչումը փոխելու չեն անցնիր: Ե. Բաւի, առաջին երկու պարագայից մէջ ց և զ տառերը՝ գրեթէ ս ի կը փոխուին արտասանութեան մէջ, և ր՝ չ ի:

Այսպէս ուրեմն արբաւ է մոնգուլթուրք տարերայ արեղա աղգեցուցութեամբ՝ նախնեաց դասական լեզուին և տառերու արտասանութեան գրեթէ բոլորական յեղափոխութիւնն վերջ գտրմանք չէր, որ հնդկաւարական շոր լեզուաց համազօր տառերն ևս փոխուէին, այլ ընդ այլոյ առմամբ, և Բ (բ) լինէր պէ, Բ (պ) փիւր, Ժ (ք) տիւն, և Ե (ա) ք և դ, այսպէս իմն և զայլս առ հասարակ: Բայց զարեմտեան հայ գրագէտն միայն այսու չէ պարտ դորովել, զի Արևելայեք իսկ հաւասարապէս չեղեցան. այլ այնու իսկ, զի յետ ըստ բաւականին մաքրելոյ և ուղղելոյ զարբառն իւր յօտարաբանութեանց, ձեռնառուութեամբ գրաբարին, չկամի ուղղել և զտառաւ գարեմութիւն իւր և զարտասանութիւն նկատմամբ հայերէն և լատին տառից: Ինչ

կը Թուրքի, Թէ Տաճկահայոց գրադիտին այսպիսի չկամուծիւնն առանց պատճառի
չէ. և իրօք այս պատճառներէս մին հիմնուած է գարձաւ Թրքական ալփաբետին
մի քանի տառերու անորոշ կամ տարբեր հնչականութեան վրայ. օրինակի ազադաւ
Ⲕ (b, p) տառն զինի Te, Ie, Dachim, Chy (խի), Sin, Sebyn, Sad, Thy, Kaf և Ghef
տառերուն իրեն Ⲕ (p, y) կը կարգացուի. իսկ ⲟ տալը (d, t) իրեն ⲟ (t, m),
այսպէս այլ վերջինս՝ քանի մի բայերու լծորդութեանց մէջ ⲟ կը կարգացուի
(gi, x) Beով մէջ բերուած զուգահնչիւններու հետ միացման ժամանակ՝ իրեն
կ'արտասանուի. իսկ ⲟ (th, θ) յաճախ անգամ մերթ ⲟ (t, m) և մերթ ալ ⲟ
(d, t) կը կարգացուի, այսպէս նաև ⲟ (ghef, q) շատ պարագայից մէջ իրեն
ձի կ'արտասանուի:

Իսկ երկրորդը կայացած է օտար ձայներն և անուանքը հայացնելու գիտաւորու-
թեան մէջ, զոր « Լանդիսի » յօգուածագիրն (Թիւ 5, 1888) այսպէս կ'արտայայտէ.
« Օտար բառ մ'իմ գրովս գրելու » հարկաւ անոր նման և ամենանման գիրն ընտրելու
եմ, որ ըստ կարի ճշգրիտ ներկայացնէ: Այսպէս է ամէն ազգաց օրէնքն, այսպէս է
բնականը: Ոչ այսպէս և մեր հայերէնն. այլ մինչև որ գրողն իւր անձին բուռն ընե-
լով զգուշաւոր մտադրութեամբ լիեղութիւնէ ձայները, մինչև որ այս կերպով ըստ
օրինի լիայակն զայլազգին՝ հայերէն չէ գրածը (!): Առաջին անգամ դէմս կ'ելլէ
օտար անուն մը Pilatos կամ Gabala, կը սխալիմ եթէ իմ տառերովս նոյն հնչմունքն
հաւատարմաբար անգրագարձեմ հայերէն. այլ հարկ է որ այնպէս չըլծմ և գրեմ
որ կարգամ Bigthatos և Cabaghà: Երրանչան օրէնք. սակայն վերջապէս օրէնք՝ զոր
յարգել պէտք է: Ահաւասիկ այս է Տառադարձոցը:»

Այս առիդներու գրող Մեծապ. Լիւիսիակն՝ գիտելու ենք, որ միտք մի կ'ուզէ յայտ-
նել, բայց ոչ իւր ներքին համոզումն առ այն: Սակայն ան չեմ կարող այսպիսի գոր-
ծողութիւն մի ուղիղ իմաստով ոչ հայացումն և ոչ ալ Տառադարձութիւն անուա-
նել, այլ ընդ հակառակն, հայերէնին՝ եւրոպացուածն և տառերու գլխովին փոփո-
խութիւն: Ձէ կարելի իրաւամբ օրէնք կուշի և զայն, որ է բոլորովին հակառակ
յարմարագրութեան օրինաց ազգաց և նախնեաց մերոց. և ոչ իսկ բոլոր հայութեան
և հայերէն չէ գրուի ընծայել, որ ինչ միայն վերջին գարուց և ուսմին գիւտ է, և
այժմ Հայոց միայ մասին ևեթ սեփական: Եւ յիրաւի, նախնիք մեր այդ կարծեցեալ
օրինաց հակառակ վարուելով Pilatusը՝ Պիլատոս (չ), Gabala՝ Գաբալա, Μαλακθηςը՝
Մալաթիա գէս յարմարագրած ժամանակ՝ լատին և յոյն ձայները պահելով հանգերձ,
ով կարէ ասել, թէ հայերէնի հակառակ դարձեցին, և կամ չհայացուցին, և թէ յետինք
Pighados և Cabagha փոխելով՝ ուղղակի թէ հայերէն և թէ լատիներէն ձայները
եղծած չեն լինիր: Արդարեւ, այս վերջին կերպով ուղղագրուած անուանք՝ այլ ոչ ևս
լատիներէն են և ոչ այլ հայերէն. որովհետեւ ոչ լատին p էն՝ = ph է, ոչ l = gh, և
ոչ ալ n = d, այսպէս իման և զայլ: Ձէ դարձեալ հայերէն, որովհետեւ այդ ոչ անուանքը
Հայոց սեփական են, և ոչ այլ կ = q և x, և ոչ այլ յ կամ ղ = q: Այս և այսպիսի
գէւ շատ անտեղութեանց վերջ արուած կը լինէր, և թէ զի, շ, Ծ, Ժ, Զ, Գ, Զ տա-
ռերը՝ զորս արեւելեան այբուբենէ առած են թարգմանիչք մեր, և արեւելեան ձայ-
ները ճիշդ արտասանելու համար ի վարչարկած են, յոյն և լատին անուանց յար-
մարագրութեան մէջ չի մտնէին բնաւ, կամ գէթ, չհայեցի անուանս յունարէնի և
լատիներէնի փոխած ժամանակ միայն գործածուելին: Անուրանալի է արդարեւ, թէ
զ աստը փոխանակ չի գործածուած է նոյն իսկ նախնեաց երկասիրութեանց մէջ
'Αλεξάνδρος Աղեքսանդրոս, և Παύλιν Φηλασιν յարմարագրուած են այնպէս՝ ինչպէս

Πούταρχος Պլուտարքոս և Licinius Լիկինիոս. բայց այսպիսի փոփոխ կիրառութեան բուն պատճառն ոչ ոք գիտէ սակաւին՝ ինչպէս որ պէտք է, այլ անհասկանալի գաղտնիք մի համարուած է մինչև ցայսօր։ Լիւն տառին՝ լ և լ տառից հետ նոյն լինելն է յարմարագրութեան մէջ նոցա տեղին ունենի՝ ոչ միայն հասկանալի է, այլ և առանց ինչ երկրպայութեան. իսկ դասին համար վերոյիշեալ հայտացումը միայն մէջ կը բերուի իբրեւ զօրեղ պատճառ, որ ըստ իս, է ամենևին անզօր։ Յիրաւի, եթէ հայտացումը լինէր բաւական պատճառ առ այս՝ այն ժամանակ ոչ միայն դ, այլ վերոյիշեալ անհասարակ թառերն ևս պէտք էր որ ստեպ փոխանակած լինէին յոճարէն և լապիներէն բաղաձայներուն 'ի յարմարագրութեան տեղ նախնեաց. սակայն այսպիսի բան մի իրեք եղան չէ և չէ մարթ քանել առ նոսա, մինչև ցժամանակակէտ աղանաղութեան յարմարագրութեան նախնեաց։ Ուրեմն քարձեալ պէտք կը լինի տեսել, թէ կամ յետագայ դարերում զառը փոխանակեց ընդ լինին. և կամ նախիկ լինի նման կ'արտասանէին զայն՝ այլևայլ պարագայից և տառերու շարժապման մէջ և մերթ Թանձր դասի։ Այս հակիրճ տեսութենէս վերջ կարեմք եզրակացնել, թէ Թրքական տառերու ձայնափոխութիւնքն և թէ հայայնեւոռ հարկն (որոց վրայ կարելի է աւելցնել իբրեւ երրորդ պատճառ մի ևս շ (p, q) տառին գոյութիւնն 'ի պարսկերէնի և ոչ գոյութիւնն արաբերէնի մէջ, յորմէ՛ առաջ եկան շ (h, p) և շ (p, q) փոփոխ կիրառութիւնքն առ մասենագիրս յետին դարուց), եթէ քարքայնականութեան ևս եղած համարինք Տաճկահայոց տառագրութեան, սակայն չկարեն լինել նոյնպէս վե՛ժ հաստատութեան՝ յարմարաւոր յայնմ։

Հայերէն նշանագրոց, նոցա հարազատ հնչման, նախնեաց յարմարագրութեան և այժմեան տառափոխութեան կնիքս խնդիրներն այսպէս պարզելէն յետոյ, այժմ՝ այս հարցս մեզ ընդառաջ կ'ելլէ։ Պէտք է արգեօք, մանաւանդ թէ իցե՞ք բանաւոր, որ Արևմտեան քրագեւոր քարձեալ շարունակէն իրենց ընթացքը հայկական Դպրութեան և դպրոցաց մէջ, հակառակ նախնեաց ընթացքին և հին Դպրութեան։ Կարծեմ թէ ոչ։ Առայժմ երբեմն 'ի մեծահանձար մատենագրաց, թէ սխալ մի ճանչ, նախ, ըստ ինքեան, ցոյց է մեծի զգոնութեան. իսկ ես կը յաւելում և զայս, թէ զայն երազապէս ուղղելն՝ է մեծագոյն ևս առաքինութիւն։ Զարմանալի է Տաճկահայ քրագրիտաց ամանց ըրած սոյն յայտարարութիւնը, թէ ինչո՞ւ համար մենք պիտի ընենք այսպիսի մի զո՛հ և ոչ Ռուսահայք։ Արդ սխալման մի ուղղութիւնը, կամ լաւ ևս ճշմարտութեան մի ընդունելութիւնն եթէ զոհագործութիւն ևս կարելի լինէր անուանել, սակայն և այնպէս ամենայն ոք պարտական է կատարել զայն. որովհետև ճշմարտութիւնը մեծին և փոքրին քով միտիակ պատկառելի է։ Այսպիսի զոհ մի չընելով Արևմտեայք՝ ոչ միայն բան չեն վաստկիր, այլ նոյն իսկ րախնայտի կերպով տուցած կը լինին, թէ այնպիսի խոտոր և վրասաբեր ընթացքը ճանաչելու կատարեալ վիճակին դէս, հասած չեն։ Թեպէտև ես համազում եմ, թէ շատ և շատ բանիբուն անձինք պէտք է որ ճանչցած ըլլան։

Թերևս ըսուի, թէ Արևելեայց յարմարագրութեան համաձայնելով՝ հարկ կը լինի նոյնպէս համաձայնիլ նոցա արտասանութեանն. այսինքն է, կենը՝ հնչել քէն և գոզը

1. Այնու՛ զի ոմանք յընթեռնուել կամ 'ի Թարգմանելն զմայն կամ զանուան ինչ պարսկականն՝ առ Արաբացի մատենագիրս, շ ով՛ զբուսմները՝ ք ով՛ յարմարագրեցին, մինչդեռ առ Պարսիկս՝ շ զբուսմ են. այսպէս և 'ի հակառակէն, արաբիկ դրոց մէջ շատ անգամ շ ով՛ զբուսմ արաբական անուանին ալ զով՛ յարմարագրեցին, որոնք սակայն շ կը զբուսին։

հնչել կող, դպրոցը՝ տփրոց ևս չալն։ Բ. Թէ ինչպէս նոր լեզուաց արտասանութիւնն՝ այսպէս ևս հայերէն նոր գպրութիւնը կը պահանջեն հետանալ 'ի հնոյն։ Առաջին հարցման լուծումն, արուեստաւ արդէն առաջին Յագուածին մէջ, Թէ ինչպէս Արեւ. լեռաց հնչումն համամատարար աւելի մօտ է յոյն և լատին տառերու հնչման, և Թէ ինչու համար Արեւմտեան Հայոց լեռիքն այլազգ կ'իմանան զայն։ Եւ յերաւի, ևւ. րոպացի հայագէտք անգամ կը վկայեն Թէ Արեւելեան Հայոց արտասանութիւնքն իրենց արտասանութեանց աւելի կը համապատասխանէ, և ինքեանք իսկ այնպէս 'կարտասանեն հայերէն տառերն։ Իսկ երկրորդ հարցին ուղղակի կարելի է պատասխանել, Թէ եւրոպական ազգաց նոր մտանադրութիւնն իսկ մերկին պէս՝ կը տարբերի 'ի հնոյն, այսինքն է՝ լատիններէն, և սակայն նոցա մէջ կը պահուի հին յարմարագրութիւնն և առաջի հնչելիներն բաց ի ց. Եւ կամ ընդ տառերէն, որք իտալերէն և 'գաղղիերէն լեզուաց մէջ միայն ձայնաւոր տառերու քով գալով Ժ, ձ, ս, շ ձայններու կը փոխուին, և Թէ իւրաքանչիւրն 'ի նոցանէ միւսնոյն տառերով կը յարմարագրէ միւսներուն անուանքը և ոչ որպէս ընդի անուանաւ։ Առտի մէջ ևս կարող եմք նոյնազօր տառերով յարմարագրել բոլոր նոցա անուանքը, ինչպէս նախնիք մեր կը յարմարագրէին յոյն և լատին անուանքը։ Բայց առ այս պահելով միտ հետեւեալ բացատրութիւնքը, այսինքն է ցօ և ցի գաղղիերէն թարգմանութեանց մէջ միշտ Ժ և Ժի յարմարագրելով, զի միւս բաղաձայն և ձայնաւոր տառերու քով հաւասար է յունարէն գամմային. և ընդ ի փոխել գէթ ընդի անուանց մէջ, իսկ արեւելեան կամ օտար անուանց մէջ քի փոխել, Այսպէս նաև րօ և քօ՝ յունարէն փ և ք տառերու պէս՝ փսի և քսի փոխել, ինչպէս ըրած են նախնիք մեր։

Անշուր է և այս պատճառանքս, Թէ այժմեան Յոյնք ևս ձանաչելով, Թէ իրենց նախնեաց միջանի տառերու հնչմանքն խոտորած են, սակայն և այնպէս չեն ուզեր այժմեան հնչմանքը փոխել, ինչպէս օրինակ իմն Վ՝ շ՝ և Վ՝ շ՝, և Վ՝ շ՝, այս բանս անուարանելի է. թայց առանց երկրայութեան է և այս, Թէ նոքա այդ տառերն միջակ և Թանձր հնչումները փոքր ինչ աղաւաղեր են, և ոչ Թէ մեղի պէս տառերն և յարմարագրութեան հնաւանդ օրէնքներն. զի այսօր իսկ այնպէս կը յարմարագրեն օտար և յունական անուանքը, ինչպէս կը յարմարագրէին նոցա նախնի մատենագիրքը։ Գուցէ Թէ գայ ժամանակ, որ նոքա ևս ընեն այն բանը, զորս ասնեւոյց եմք մէջ. ուստի լաւ կը լինէր և միանգամայն պատուարեր, որ մենք կանխելիք սահմանորդ լինել նոցա։ Երբայի, որքան աւելի փութանք՝ այնքան ևս գիւրտաւ պիտի յաջողինք, և որչափ գանգաղինք, այնչափ ևս զժուարութեան լեռնի արգելք պիտի լինին մեզ. որովհետեւ մէկ կողմէն գալրոցաց և գրագիտաց թիւն օր ըստ օրէ կը բազմանայ, իսկ միւս կողմէն այլ յիւթական արգելքներու պատճառաւ ուղղելիք տառագրութիւնն աւելի խոր կերպով կ'արմատանայ։ Արդարեւ, Ռոմասայէ իրենց նորակայած գրականութեան ասպարիզին մէջ մտած ժամանակ, և Թէ անդէն և անգլիական լեռնի ուղղել իրենց սխալանքը, այսօր զժուարաւ պիտի կտրենային յաջողել յայնմ։ Աւելի նոցա այնքան գիւրտութեամբ և գովութեամբ կ'առարարմ. զորք՝ մեզի համար ինչու անկարելի և նուաաստացուցիչ պիտի համարուի։ Ոչ ապաքէն դեռ 10 տարի առաջ Ռոմասայ այնքան գաւառաց Հայոց գրագէտ գրան ևս կայ մեզ 'ի յորդոր և ի խրախոյս, որ զայդ ընդ աշխարհագրական միութեան՝ այդ կրկին կէտերով ևս միացաւ և համաձայնեցաւ առաջնոց հետ. ուր թողից յիշել և Տաճկահայոց մեծաւ մասնութիւն կազմող և անգրագէտ գրան, որ արդէն իսկ իւր հնչմանքով ուղղութեան ձանապարհին վրայ կեցած և զայս կը պահանջէ 'ի մենք։ Ես այս լեռնի համա-

գումն ունիմ, եթէ համաշունջ խորհրդով սկսինք իրադրոծել կամ վերահաստատել գէթ նախնեաց յարմարագրութիւնն, որուն բնական կերպով պիտի հետեւի և արատաւնութիւնը, չափակաւուած օգուաներ ևս պիտի տեսնուին ընդ հուպ. այսինքն է, այս կերպով պիտի կարենան միանալ Տաճկահայոց և Ռուսահայոց դպրութեան այլևայլ առանձնայատկութեամբ բաժանեալ ձիւղերն, արգիւնաբեր կերպով պարարելու համօրէն հայութեան ծարաւու աւգաստաններն. այս կերպով այլ ևս չպիտի խորշին Տաճկահայք ընթեռնուել Ռուսահայոց մատեններն, և ոչ ալ վեր. ջինքս՝ զգիրս առաջնոց. այս կերպով պիտի նուազին երկուստեք իրարու գէմ ստեպ ստեպ յարուցած անօգուտ վէճերն, և վնասաբեր տախլութիւնը, և պիտի կողմուի մի միայն հասարակութիւն. միով բանիւ՝ այս կերպով գիրաւ պիտի ճանչնան իրարու մտքերն և պիտոյքը, և հաւաստարապէս խնամք տանին իրարու մտաւորական և բարոյական կրթութեան, այսու գիրաւ մուտք պիտի գտնեն այս երկու հայ հասարակութեան անհասաներն իրարու գործոց և պաշտամանց մէջ և սիրով յաջողին: Արդ այս և այսպիսի օգուտներ 'ի մտի ունենլով, կը յուսամ, թէ ազգասէր մամուլը չի թողուր, որ ընդ երկար խօսուած և գրուած այս խնդիրներս ևս առանց ինչ արգիւնաբերութեան մեռնին, հանգոյն այլոց բազմաց:

Հ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳՍԵԱՆ

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ՀՍՅԿԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆ ՈՒԹԻՒՆԷՔ ՆԱԽՆԵԱՍ

Դեղուաց ուսումն կրնայ ըստիլ նախադուռն ամենայն գիտութեանց, և անմխտելի է, թէ ամենակարեւոր է ազգաց քաղաքական և առևտրական յարաբերութեանց մէջ, որով երկու ժողովուրդը՝ սերնդեամբ և աշխարհօք զատեալք՝ կը միանան իրերաց հետ և փոփոխակի կ'ազդեն միմեանց վրայ: Եւ ո՛վ չի գիտեր թէ յիրաւի մեր ազգն գերազանց է քան զբազում ազգս 'ի լեզուագիտութեան մասին, որոյ մեծագոյն ուրիւնք են և թարգմանութիւնք:

Ճարտար և ճշգրիտ թարգմանութիւնն, ըսին բազում հմուտք, է միւս այլ ինքնագիր հեղինակութիւն, որով կը վայելչանայ ոճ գրութեան, կը յստակի ճաշակն, նաև կը բարգաւաճին ազգի ազգի գիտութիւնք և կը ծաղկին գեղարուեստք: Եւ յիրաւի մեր ազգին Մատենադպրութեան մէջ ո՞ր դարն արժանացաւ կոչիլ Ոսկեդար, եթէ ոչ Հինգերորդ դարն, որ և կը կոչուի ևս՝ Թարգմանչաց դար. ամէն Հայ կը լսէ անդ իւր յատուկ լեզուն՝ իւր յստակ կանոնօքն և արտասանութեամբ: Կրնայ Հայն յիրաւի լինել թարգման աշխարհի, որով և թարգման ամենայն խանդից սրտի և զգացմանց հոգւոյ: Եթէ կը մրցին Յոյնք, Աւորիք և օտարապի մատենագիրք փութով և ճոխութեամբ արտագրել իրենց երկասիրութիւնքը, Հայ թարգմանչին երազութեան առջև գրեթէ կը սպառին մատենադարանք. երբեմն և նոցա